

բառարանը նախորդներից տարբերվում է նրանով, որ դրանում ընդգրկված է գրաբարի ամբողջ բառապաշարը, բառիմաստները հաստատելու համար բերված են բնագրային վկայություններ, ստուգաբանում են բազմաթիվ բառեր: Հեղինակը յատուկ ընդգծում է հայերէնի հնուկները, ճոխությունը, բառակազմական միջոցների հարստությունը⁷ եւ այլն: Դրանք այնպիսի յատկանիշներ են, որոնց հիման վրայ բառարանը կարելի է համարել բացատրական, ուղղագրական, ստուգաբանական, հոմանիշների, յատուկ անունների կանոնակարգող բառարան:

Մխիթար Սեբաստացու աշակերտները, հետեւելով իրենց ուսուցչի խորհուրդներին, հայերէնը մաքրեցին լատինաբանությունից, գրականության մէջ ըստ հնարաւորին վերականգնեցին մետոպիան շրջանի հայերէնը եւ հիմքեր ստեղծեցին կազմելու էլ աւելի կատարելագործուած բառարան, որպիսին եղաւ նոր հայկազեան բառարանը:

ՀՀԲ-ի հրատարակութիւնից յետոյ անցած տասնամեակների ընթացքում առաջ եկած հայ մշակոյթի ու գիտական մտքի նոր վերելքը, նորայայտ մեծաքանակ բառերի շրջանառութեան մէջ մտնելը հայերէնի բառապաշարի ուսումնասիրութեան բնագաւառում նոր պահանջներ են դնում: Արդէն իսկ այնպիսի բառարանի կարիք էր զգացւում, որը ներառէր ոչ միայն ՀՀԲ-ի բառամթերքը, այլ նաեւ այն նորագիւտ բառերը, որոնք իրենց հետ բերել էին այդ ժամանակահատուածում յայտնաբերուած ձեռագրերն ու հրատարակուած մատենաները: Այդպիսի աշխատանք է լինում Վենետիկի Մխիթարեան միաբանութեան երեք վարդապետների՝ Հ. Գ. Աւետիքեանի, Հ. Խ. Սիւրմէլեանի, Հ. Մկրտիչ Աւգերեանի բառարանը⁸:

ՆՀԲ-ի հեղինակների օգտագործած շուրջ հազար ձեռագիր ու տպագիր աշխատանքները կարելի է բաժանել երկու խմբի՝ բառարաններ եւ մատենագրական աղբիւրներ: Բառարանների թուին են պատկանում ձեռագիր եւ տպագիր միջարք աշխատանքներ, մասնաւորապէս «Բառգիրք հայոց»-ը, ՀՀԲ-ն, թարգմանական մի քանի աշխատանքներ: Բառարանի բառապաշարի համար աղբիւր է դարձել 5-17-րդ դարերի հայ ինքնուրոյն եւ թարգմանական մատենագրութիւնը:

ՆՀԲ-ի բառապաշարը զգալիորէն գերակշռում է ՀՀԲ-ի բառապաշարին. Հր. Աճառեանի հաշուումներով՝ ՆՀԲ-ն պարունակում է 51400 բառ ու բառակապակցութիւն⁹: Բայց պէտք է նկատի ունենալ, որ այդ բառապաշարի մէջ մտնում են բառային տարբեր շերտեր՝ գրաբարեան, միջինհայերէնեան եւ ժողովրդախօսակցական, որոնցից գերակշռողը գրաբարեան շերտն է: ՆՀԲ-ում բառայօդուածները մշակուած են տուեալ ժամանակին համապատասխան մակարդակով: Իւրաքանչիւր գլխաբառի համար տրուած են քերականական նշումներ, տարբերակուած են բառի իմաստներն ու նրբիմաստները, առանձնացուած են տուեալ գլխաբառով կազմուած յարադրական կազմութիւնները եւ բերուած են բնագրային վկայութիւններ: Բառիմաստի բնութագրման համար կիրառուել են տարբեր միջոցներ, այսպէս՝ ա) նկարագրութիւն, օրինակ՝ Բնաշխարհ, ի, աց, գերեւելի մասն աշխարհի, յորս բուն բնակութիւն է մարդկան, կամ որ է բուն աշխարհ տէրութեան ուրուք, բ) հոմանիշների թուարկում, օրինակ՝ Յստակմ, ի, աց, ա. Պարզ եւ անպղտոր, զուտ, անխառն, անաղտ, ջինջ, մաքուր, վճիտ, սուրբ, պայծառ, ակնակիտ, գ) բառիմաստի թարգմանութիւն, օրինակ՝ Վարդ, ի կամ

ոյ. ից կամ ուց, գ. վրաց. վարդի, պարսկ. արաբ. վարտ, վէրտ, յուն. լօտօն, լատ. ուօզա. Մաղիկ գեղեցիկ որպէս թագաւոր ծաղկանց, դ) յղումներ տալը, որոնք վերաբերում են բառի հոմանիշ ձեւերին կամ գրային տարբերակներին, օրինակ՝ Աշխատանք, նաց, Տե՛ս Աշխատութիւն, ե) բարդ բառերի վերլուծութիւն, օրինակ՝ Աստուածամարտ, ի, ից կամ աց. Որ մարտնչի ընդդէմ Աստուծոյ, Աստուծոյ դէմ կռուող:

Բառարանում տեղ են գտել նաեւ որոշ թուով յատուկ անուններ՝ անձնանուններ, տեղանուններ, դիցանուններ, ցեղերի անուններ եւ այլն. օրինակ՝ Հայկ, Լիբիա, Արամազդ, Քաղղէացի եւ այլն, որոնց մի մասը նաեւ ստուգաբանուած է, օրինակ՝ Յիսուս, ի, իւ. բառերը. եաշուա, այսինքն Փրկիչ:

ՆՀԲ-ում առանձնացուած են համանուն բառերը եւ ներկայացուած ինքնուրոյն գլխաբառերով (տե՛ս, օրինակ ԱԿՑ գլխաբառերը):

ՆՀԲ-ն կարելի է համարել նաեւ պատմական բառարան, որովհետեւ դրանում բառայօդուածի վկայութիւնները հիմնականում դասաւորուած են ժամանակագրական յաջորդականութեամբ: Բնագրային վկայութիւնները ոչ միայն ճշգրտում ու հաստատում են բառերը, այլեւ դրանցով հաստատում են բառերի քերականական յատկանիշները՝ հոլովումը, խոնարհման տիպը եւ այլն:

Նոր հայկազեան բառարանը ինչ-որ չափով կարելի է համարել նաեւ ստուգաբանական բառարան, քանի որ բառարանագիրները տուել են ոչ միայն բառերի իմաստների բացատրութիւնները, այլեւ փորձել են բացայայտել բազմաթիւ բառերի նախնական ստուգաբանական իմաստները: Այդ տեսակետից բառարանի

մասին շատ բարձր կարծիք է յայտնել էդ. Աղայեանը: «Նրանում,- գրում է գիտնականը,- ճիշտ կերպով ստուգաբանուած են յունարէնից, լատինարէնից, երբայերէնից, պարսկերէնից եւ այլ լեզուներից փոխառեալ հազարաւոր բառեր, ինչպէս եւ տրուած են բազմաթիւ բառերի համեմատութիւններ»¹⁰:

Այսպիսով, Նոր հայկազեան բառարանն իր կազմութեան սկզբունքներով, բառամթերքի քանակով, բառայօդուածի կառուցուածքով, քերականական նշումներով, բառիմաստի բացատրութեան միջոցներով, ստուգաբանութիւններով, վկայութիւնների հաւաստիութեամբ եւ այլ կողմերով զգալիորէն գերազանցում է Հին հայկազեան բառարանին: ՆՀԲ գերազանցում էր ոչ միայն մեր նախորդ բառարաններին, այլ նաեւ ապահովում էր տուեալ ժամանակի եւրոպական բառարանագրութեան մակարդակը: Այնուամենայնիւ ինչպէս ամէն մի աշխատանք, այդպէս էլ Նոր հայկազեան բառարանը չէր կարող իսպառ գերծ լինել թերութիւններից, որոնք ժամանակին նկատելի է մեր մեծ հայագէտ-լեզուաբան Նորայր Բիւզանդացին եւ կատարել բազմաթիւ սրբագրութիւններ:

Մ. Մինասեանն իր հրատարակութեան¹¹ առաջաբանում նշում էր, որ Ն. Բիւզանդացին բառարանի վրայ կատարել է բազմաբնոյթ աշխատանք: Մեր հաշուումներով՝ Ն. Բիւզանդացին ՆՀԲ-ում ընդհանուր առմամբ կատարել է աւելի քան տասներկու հազար սրբագրութիւն, քան Վենետիկի հազար սրբագրութիւն, այն է՝ առանձին գլխաբառերի ու հոլովումների ճշգրտումներ, նոր գլխաբառերի ու վկայութիւնների յաւելումներ, առանձին գլխաբառերի կրճատումներ եւ այլն: Նա աւելացրել է եղած արմատներով կազմուած անանցաւոր կամ բարդ բառեր. օրինակ՝ ՆՀԲ-ն ունի զուգաչա-

փոռթիւն, ընդհատութիւն, թագընկալութիւն, իսկ Բիւզանդացին աւելացնում է զուգաչափ, ընդհատ, թագընկալ գլխաբառերը: Առաւել կարեւորն այն է, որ իւրաքանչիւր յաւելման համար նա բերում է բնագրային օրինակներ:

Ն. Բիւզանդացին աւելացնում է Հարիւրաւոր ածանցաւոր բառեր, օրինակ՝ աներախտաւոր, փոքրաբար, օծարան եւ այլն: Նրա յաւելումների շարքում կան նաեւ ՆՀԲ-ում չարձանագրուած բառեր, ինչպէս, օրինակ՝ դժգոհ, լեռնաբլուր, լճանալ, մեծահոգ, պեղումն եւ այլն: Նա ճշգրտել է աւելի քան վեց հարիւր գլխաբառ, աւելացրել շուրջ հինգ հարիւր նոր բառիմաստներ, ստուգաբանել որոշ բառեր: Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Ն. Բիւզանդացու «Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ժԱժէ դարուց» (Ժնեւ, 2000) աշխատանքը, որը նա կազմել է 1884-1886 թթ. ընթացքում: Բառարանի հրատարակիչը՝ Մարտիրոս Մինասեանը, ոչ թէ ձեռագիրը հրատարակել է նոյնութեամբ, այլ կատարել է խմբագրական բազմապիսի աշխատանք, այն է՝ առանձին յաւելումներ, կէտադրութեան արդիականացում, բառային յղումներ, յապաւումների բացում, համանուն բառերի համարակալում, առանձին բառերի ու բառաձեւերի ուղղում (դրանք տուել է միջակ փակագծերում), գլխաբառերի այբբենական կարգի ճշգրտումներ, բայերի գլխաբառերի ներկայ ժամանակի եզակի առաջին դէմքի վերածում եւ այլն:

Բիւզանդացու սոյն բառարանը բաղկացած է երկու մասից՝ մշակուած սկզբից մինչեւ Պէտալ բառը, եւ անմշակ Պէտք - Ֆ մասը: Առաջին մասում տրուած են բառերի բացատրութիւնները եւ բերուած են բնագրային օրինակներ, իսկ երկրորդում գլխաբառերի մի մասը բա-

ցատրուած է, իսկ միւսները թուարկուած են առանց բացատրութիւնների ու օրինակների: Բառարանում տեղ են գտել ոչ միայն նշուած դարերի մատենագրութեան մէջ գործածուած բառերը, այլեւ դրաբարեան բազմաթիւ բառերի նոր կիրառութիւններն ու իմաստները. ինչպէս, օրինակ՝ Աստուածածին - ծնի, գ. Աստուածածնի ամիս, աւգոստոս. «Եւ յորժամ գնացին նոքա, վճարեալ էր տէր Ներսէս (Շնորհալին) ի կենաց աստի եւ հասեալ ի Քրիստոս ի թուին Ասորոց ՌՆՁԵ եւ Հայոցն ՌԺԲ (իմա՝ ՌԻԲ, Քրիստոսի 1173), յԱստուածածնին ամսեանն ի յութ, յաւուր հինգշաբթու» (Միխ. Ասորի): Եւ. դերանուն. ընծի, ընծի, ընծիկ. «Տարին անգամ չես հանդիպիր, Որ զքեզ ընծի ի կեր տայիր» (Մինաս Եւդոկիացի): Առանց նախադրութիւն. ընդ ուղղականի [հայցականի]. «Եւ ինքն էր մանուկ մարմնով, ամաց քսանից, առանց մորուս [մօրուս], այր քաջ, հզօր եւ պատերազմող» (Մ. Ուռհայեցի) եւ այլն:

Ն. Բիւզանդացու եւ հետագայ մեր հետազոտողների աշխատանքը ցոյց է տալիս, որ ՆՀԲ-ի հեղինակների ձեռքի տակ չեն եղել առանձին ձեռագրեր ու տպագիր աշխատանքներ, որի հետեւանքով էլ բառարանից դուրս են մնացել զգալի թուով բառեր: Յայտնի է, որ «նոր» շատ բառեր է յայտնաբերել Հր. Աճառեանը: Վերջին ժամանակներս այդ խնդրին անդրադարձել է լեզուաբան Լ. Յովհաննիսեանը: Նա քննել է ՆՀԲ-ում եւ Արմատականում չարձանագրուած շուրջ 350 բառ¹²:

ՆՀԲ-ի հիման վրայ հետագայում կազմուել են գրեթէ մեր բոլոր բառարանները, որոնցից առաջինը Առձեռն բառարանն¹³ է: Դրանում գլխաբառերի բնութագրումից յետոյ բացատրուած են բառիմաստները եւ բերուած են դրանց

թուրքերէն (հայատառ) համարժէքները, բայց բնագրային վկայութիւններ չեն տրուած:

1860-ական թուականներին Վենետիկի Միխիթարեան միաբանութեան անդամ Գրիգոր վ. Ճելալեանը վերամշակում է Առձեռն բառարանը, վերականգնում ՆՀԲ-ից դուրս հանած բառերը, աւելացնում աւելի քան 5000 բառայօդուած եւ հրատարակում 1865 թ., առանց հեղինակի անուան նշման: Հր. Աճառեանի հաշուումներով՝ Առձեռն բառարանի երկրորդ հրատարակութիւնը պարունակում է 56510 բառ՝ չհաշուած բառերի տարբերոճերն ու գրութիւնները: ՆՀԲ-ում Ա տառով սկսուող բառերը համադրելով միմեանց հետ՝ պարզել ենք հետեւեալը: մեանց հետ՝ պարզել ենք հետեւեալը: Մեր հաշուումներով՝ ՆՀԲ-ում կայ Ա տառով սկսուող աւելի քան 160 գլխաբառ, որոնք չկան ԱԲ-ում: Այսպէս, օրինակ՝ աղիտաշարժ, ամօթադէժութիւն, անտուչական, առաջախաղաց, արհամարհեամ չական, առաջախաղաց, արհամարհեամ եւ այլն: Հարկ ենք համարում նշել, որ այդ բառերի մեծ մասի կրճատումը տեղին էր, որովհետեւ դրանցից շատերը անստոյգ բառեր են, գրչագրական տարբերակներ, յատուկ անուններ, նոյնիսկ սխալագրութիւններ:

Նշուած հատուածում աւելի մեծ թիւ են կազմում ձեւալեանի կատարած յաւելումները, որոնց քանակն անցնում է 1300-ից: Դրանք հիմնականում ածանցաւոր եւ բարդ բառեր են. այսպէս, օրինակ՝ ազգականաբար, աստուածահաճոյաբար, ազգականաբար, աստուածահաճոյաբար, աւելաստացուածութիւն, անաթոռ, անփրկական, անօրինակելի, ազատագործ, ախուկակից, ակօսապատառ, ահեղագարդ, յանակից, աղիւսածոյլ, աղքատատուր, աղեղածիգ, աղիւսածոյլ, աղքատատուր, առաքիւնարհակէզ, աշխարհապատ, առաքինազն, աստեղանշան, աստղահամայ, արագործ, արագալեզու, արեւելակոյս, արծուանման, արքայաշնորհ, աւանդատուն,

աստուածազակ, աստուածավճիռ, ազատաբարոյութիւն, ակնագնացութիւն եւ այլն: Յաւելումների ցանկում հանդիպում ենք նաեւ յարադրական կազմութիւնների, օրինակ՝ ակնաւորիլ որթոյ, ամուսնութիւնընկալ կողմանք, անգլխահարկ լինիմ, անդնդամուխ լինիմ, աստուածակէզ առնեմ, արտահալածանս առնեմ եւ այլն:

Այդ բառերից ու բառակապակցութիւններից շատերը գործածուել են 5-11-րդ դդ. գրաբար մատենագրութեան մէջ, հետեւաբար դրանց յաւելումը տեղին է, այսպէս, օրինակ՝ անդնդաբար, անտուչական (Ագաթ.), անցուցողաբար, առաջախաղաց, աւետարանականապէս, աղբիւրահոս, աւետագոչ, աւետալոյս, առաքիւնազն (Կաղանկատուացի), աստուածազակ (Եղիշէ), աշխատաւանդ հանգոյց (Բուզանդ), աստուածակէզ առնեմ (Արծրունի) եւ այլն:

ՆՀԲ-ի հիման վրայ կազմուած յաջորդ բառարանը Գր. Փեշտիմալճեանի բառարանն¹⁴ է: Հեղինակը չի կարողանում աւարտին հասցնել իր աշխատանքը, որովհետեւ նա աշխատակցում էր «Յայսմաւուրք»-ին, որը հրատարակում է 1834 թ., Կոստանդնուպոլսում: Այդ բացատրական բառարանը կազմում-աւարտում են նրա աշակերտները եւ հրատարակում իրենց ուսուցչի անունով: Բառարանում բացատրութիւնները տրուած են գրաբարով, երբեմն էլ՝ աշխարհաբարով եւ թուրքերէն, բնագրային վկայութիւններ չեն բերուած, բայց յայտնի է, որ վկայութիւնները աւելի յստակ կերպով են բացատրում բառերի իմաստներն ու նրբիմաստները: Եւ դա է պատճառը, որ Հր. Աճառեանն այդ բառարանի գործածութիւնը «զգուշակի» է համարում¹⁵:

19-րդ դարի 30-40-ական թուականներից սկսած գրաբարի բառարանագրութեան վերելքը շարունակուում է նաեւ

դարի եկրորդ կեսին: Այդ ժամանակաշրջանում կազմվում են տարբեր տիպի բառարաններ, ինչպիսիք են՝ Մ. Չամչեանի, Է. Հիւրմիւզեանի եւ այլոց բառարանները¹⁶: Դրանցից ուշագրութեան է արժանի Հիւրմիւզեանի բառարանը, որի առաւելութիւններն են՝ ա) բառարանից դուրս են հանուել այն բառերն ու արտայայտութիւնները, որոնք մեր նախնիների հեղինակածը չեն, բ) ճշգրտուել են բառերի նշանակութիւններն ու աշխարհաբարի դիմաց դրուել են գրաբարեան բուն համարժէքները, գ) բառարանը ճոխացուել է մեր լեզուի նոր բառերով ու ոճերով, դ) բառարանը մաքրուել է թուրքական խորթ բառերից:

Նոր հայկազեան բառարանը թէեւ մինչեւ օրս մնում է գրաբարի անգերազանցելի բառարանն ու բազմապիսի մասնագիտութիւնների տէր մտաւորականների սեղանի գիրքը, բայցեւայնպէս ուրախալի է, որ մեր օրերում էլ կազմվում են գրաբար-աշխարհաբար բացատրական բառարաններ, որոնցից յիշատակութեան են արժանի Լ. Խաչատրեանի եւ Ռ. Ղազարեանի բառարանները:

Լ. Խաչատրեանի բառարանը¹⁷ պարունակում է գրաբար մատենագրութեան մէջ գործածուած շուրջ 4000 այնպիսի բառեր, որոնք բառաքերականական իմաստով ու արժէքով երկփեղկուել են եւ լեզուի համաժամանակեայ կտրուածքում (գրաբարում) դուրս եկել խօսքիմասային յարացոյցի շրջանակներից ու հանդէս եկել երկարժէքով (գոյական//ածական, ածական//մակբայ, մակբայ//նախադրութիւն եւ այլն), եռարժէք (գոյական//ածական//մակբայ, ածական//մակբայ//նախադրութիւն եւ այլն), քառարժէք (ածական//գոյական//մակբայ//նախադրութիւն) խօսքիմասային իմաստների համատեղումով, օրինակ՝ Զանխուլ, ած. ծածուկ,

զաղտնի, անյայտ, գ. ծածուկ տեղ, մակբայ. լռելեայն, լուռ ու մունջ, նախադրութիւն. գաղտնի, մեկուսի եւ այլն:

Ռ. Ղազարեանի բառարանն¹⁸ ընդգրկում է 5-11-րդ դարերի գրաբար ինքնուրոյն եւ թարգմանական երկերում վկայուած շուրջ 49 հազար բառ ու դարձուածք: Դրանով իսկ այդ բառարանը տարբերուում է ՆՀԲ-ից, որովհետեւ վերջինս, ինչպէս յայտնի է, պարունակում է 5-17-րդ դդ. մատենագրութեան բառապաշարը: Բացի դրանից, Ղազարեանի բառարանը պարունակում է նաեւ այնպիսի բառեր, ու բառակապակցութիւններ, որոնք յայտնաբերուել են ՆՀԲ-ի տպագրութիւնից յետոյ հրատարակուած գրաբար մատենագրութեան մէջ: Վերջիններս քանակը հասնում է 430-ի, որից 80-ը բառակապակցութիւններ են: Դրանց մի մասը բառարանագիրը քաղել է Հր. Աճառեանի «Հայերէն արմատական բառարան»-ից, ինչպէս, օրինակ՝ աբիոն, խորակ, կաճառանոց, հագագապահ, յարազինեալ, յափրել եւ այլն: Ռ. Ղազարեանը քաղել է նաեւ այնպիսի բառեր ու բառակապակցութիւններ, որոնք չկան նաեւ «Արմատական»-ում, օրինակ՝ ազուեստ (Խոր.), այլոցկերութիւն (Բուզ.), անկշռելութիւն (Ագաթ.), բաստեռն, օտարախորթ (Եղիշէ), ժողովրդակեցոյց (Փարպեցի), խաղճունք (Տիմ. Կուզ), կիւնիկ (Սեբէոս), արժանահատոյց, ուռնաղորդ (Նարեկացի), աւետասքանչ, բազմադաշն, գեղեցկաբոյս, թուանիկ (Կաղանկատուացի), ազդեցութիւն բնական/ /ազդումն բնական, անկանել ընդ մահուամբ, զարբանեկութիւն հարկանել (Եզնիկ), զբանսի բերան դնել (Բուզանդ, Եղիշէ), ծաղր եւ այլն առնել, կենաց դեղ (Բուզանդ), գութ արկանել, դիմադարձ լինել, երգ ի բերան առնուլ (Եղիշէ), այր զարամբ ելանել (Խորենացի) եւ այլն:

Գլխաբառերն օժտուած են քերականական, իմաստաբանական, գործառական-ոճական նշումներով ու բացատրութիւններով: Հեղինակային վկայութիւններով վաւերացուած են այն բառերը, որոնք տարբեր պատճառներով տեղ չեն գտել ՆՀԲ-ում, ինչպէս նաեւ հազուադէպ գործածութիւն ունեցող կամ ընդհանուր գործածական բառերի մասնաւոր նշանակութիւնները (տե՛ս, օրինակ՝ Ազատութիւնները (տե՛ս, օրինակ՝ Ազատութիւն, Ազնիւ, Ազուեստ, Աթինեալ, Ախտասէր, Ակնբաց բառայօդուածները):

Բառերի նշանակութիւնը հիմնականում բնորոշուում է երկու եղանակով՝ նկարագրական բացատրութեամբ եւ հոմանիշների միջոցով:

Մինչ այժմ խօսք եղաւ գրաբարի բացատրական բառարանների մասին: Դրանցից բացի՝ գրաբարի բառարանագրութիւնը հարուստ է նաեւ թարգմանական բառարաններով, որոնցից յիշատակութեան են արժանի Հ. Մ. Զախախեանի, Ն. Բիւզանդացու աշխատանքները:

Երկլեզուեան բառարանների շարքում լաւագոյն գործերից մէկը Հ. Մ. Զախախեանի Հայերէն-խալիբէն բառարանն¹⁹ է, որը պարունակում է աւելի քան 60 հազար բառայօդուած: Որպէսզի իր աշխատանքն օգտակար լինի շատերի համար, նա կազմում է ընդարձակ բառարան, «... զի մի՛ միայն ուսմկաց այլ եւ քաջավարժից իցէ պիտանի»²⁰:

Բառարանում հանդիպում ենք այնպիսի բառերի, որոնք չկան ՆՀԲ-ում, ինչպէս, օրինակ՝ ազատագիր, ազատախնայ, օրինակ՝ ազատագիր, ազատախնայ, ազատագրութիւն, ակնաբոյժ, ակնոց, այբբենարան, ասպ, բաժանելի, դրատուն, դաւադիր եւ այլն:

Բառարանի 1499-1506 էջերը յատկացուած են անուններին, ուր տեղ են գտել 900 անձնանունների ու տեղանուններ:

Հ. Մ. Զախախեանի բառարանը շատ բարձր է գնահատուել մեր մեծ մտաւորականների կողմից: Հր. Աճառեանը, սոյն բառարանը համեմատելով ՆՀԲ-ի հետ, գրում է. «... նախորդից ու նուազ, բառերի նշանակութեան կողմից նրանից աւելի կատարեալ մի գործ է»²¹:

Անուանի մատենագէտ, թարգմանիչ, բանասէր Արսէն Ղազիկեանը Զախախեանի բառարանի մասին գրում է, որ այն շատ յաջողուած աշխատանք է ոչ միայն հայերէնի, այլ նաեւ իտալերէնի համար²²:

Երբ Զախախեանի բառարանը համեմատում ենք նրանից յետոյ հրատարակուած բառարանների (Մ. Քաջունի, Ս. Գանթարեան, Ա. Գոնտակճեան) հետ, աչքի են ընկնում Զախախեանի բառարանի առաւելութիւնները, մասնաւորապէս գլխաբառերի բնութագրման, բառերի իմաստաբանական ու լեզուաբանական մշակման, համանուն բառերի ներկայացման եւ այլ առումներով: Իսկ այդ բոլոր բառարանները, երբ համեմատում ենք Նոր Հայկազեան բառարանի հետ, նկատում ենք, որ բառերի բանասիրական, լեզուաբանական, իմաստաբանական մշակման տեսակետներից վերոնշեալ բոլոր բառարաններին գերազանցում է Նոր Հայկազեանը: Վերջինս նրանց գերազանցում է բառի քերականական բնութագրմամբ, բացատրութեան մատչելիութեամբ, բառերի համանիշների թուարկմամբ բազմաթիւ լեզուներով, բառի ամէն մի իմաստի ու գործածութեան ստուգամբ ու հաստատմամբ բնագրային օրինակներով, համանուն բառերի տարբերակմամբ, աւելի մեծաքանակ բառակապակցութիւնների յիշատակմամբ, հարիւրաւոր բառերի ստուգաբանութեամբ, բառապաշարի ընդգրկմամբ եւ այլն: Այդ յատկանիշների շնորհիւ ՆՀԲ-ն մինչեւ օրս ամենավա-

տահելի ու ամենագործածական բառա-
րանն է ոչ միայն գրաբարագետների, այլ
նաեւ ամէն մի մասնագիտութեան տէր
մտաւորականի համար: Անվերապահօրէն
կարող ենք ասել, որ ՆՀԲ-ի հրատարա-
կութիւնից յետոյ անցած շուրջ հարիւր
եօթանասուն տարիների ընթացքում հրա-
տարակուած թէ՛ գրաբարի, թէ՛ աշխար-
հաբարի բառարանների հիմքում այս
կամ այն չափով ընկած է այդ բառարա-
նը: Այս տեսակետից շատ բնորոշ է Էդ-
Աղայեանի դիպուկ դիտողութիւնը ՆՀԲ-
ի վերահրատարակչութեան առթիւ նրա
գրած «Երկու խօսք»-ում. «Արդէն գրեթէ
մէկուկէս դար է, որ հրապարակի վրայ է
այս բառարանը, բազմաթիւ հայերէն բա-
ռարաններ են հրատարակուել այդ ժա-
մանակաշրջանում եւ նրանցից ոչ մէկը
չի կազմուել առանց «Հայկագեանի» օգ-
տագործման: Աւելին, չկայ մի բառարան,
որի հիմքում, ուղղակիօրէն թէ անուղղա-
կիօրէն, ընկած չլինի այս բառարանը»²³:

Թարգմանական բառարանների շար-
քում իր արժանի տեղն ունի Ն. Բիւզան-
դացու Ֆրանսերէն-հայերէն բառարանը²⁴,
որը պարունակում է 50 հազար բառայո-
դուած: Բառարանի ֆրանսերէն բառա-
ցանկը հեղինակը վերցրել է Լիտրէի
“Dictionnaire de la langue française” եւ
ֆրանսիական ակադեմիական բառարան-
ներից: Նկատի ունենալով, որ 19-րդ դա-
րի երկրորդ կէսում դեռեւս շարունակ-
ւում էր գրապայքարը, եւ Ն. Բիւզանդա-
ցին էլ արեւմտահայ այն մտաւորական-
ներից մէկն էր, ովքեր կողմնակից էին
գրաբարին, նա իր բառարանում թարգ-
մանութիւններն ու բառաբացատրութիւն-
ները տալիս է գրաբարով: Եւ գուցէ այդ
պատճառով է, որ նրա բառարանը շատ
լայն տարածում չի գտնում, քանզի 19-
րդ դարի 80-ական թթ. հայերէնում իշ-
խող լեզուն աշխարհաբարն էր: Այդու-

հանդերձ, մեծ է Ն. Բիւզանդացու բառա-
րանի գիտական ու տեսական նշանակու-
թիւնը ընդհանրապէս հայ բառարանա-
գրութեան եւ մասնաւորապէս թարգմա-
նական բառարանագրութեան զարգաց-
ման գործում: Այդ տեսակետից խիստ
բնորոշ է Հ. Ն. Ակինեանի գնահատակա-
նը՝ տրուած Ն. Բիւզանդացու բառարա-
նին. «Նորութիւն մըն էր ան հայ գրա-
կանութեան մէջ թէ ըստ ձեւին եւ թէ
ըստ ընդարձակութեան եւ կը համապա-
տասխանէ հեղինակին հմտութեան եւ
բարեխղճութեան»²⁵:

Բացատրական բառարանների ու-
սումնասիրութիւնից պարզուեց, որ այդ
աշխատանքները միաժամանակ թարգմա-
նական գործեր են, որովհետեւ գրաբար
գլխաբառերը բացատրուած են ոչ թէ
միայն գրաբարով կամ աշխարհաբարով,
այլ նաեւ այն ժողովրդի լեզուով, որտեղ
ապրել է բառարան կազմողը: Այդ
սկզբունքն ունի գործնական նշանակու-
թիւն, այն է՝ բառարանի միջոցով հայու-
թեանը հաղորդակից դարձնել տուեալ
ժողովրդի լեզուին: Եւ այդ նկատառու-
մով էլ Արեւմտեան Հայաստանում կազ-
մուած բոլոր բառարաններում բացատ-
րութիւնները տրուել են նաեւ թուրքերէ-
նով, իսկ ուսական միջավայրում հրա-
տարակուած բառարաններում՝ ուսերէ-
նով: Այդպիսի բառարաններից առաջինը
Յովսէփ Արցախեցու աշխատանքն²⁶ է:
Ռուսական ուղղութեամբ աւելի ծա-
ւալուն բառարան է լոյս տեսել 19-րդ
դարի վերջում: Դա Յովհաննէս Տէր-Աբ-
րահամեանի գրաբար-աշխարհաբար աշ-
խատանքն²⁷ է, որը պարունակում է
36750 բառայոդուած: Այդ բառարանի
բառապաշարին ծանօթանալիս նկատում
ենք, որ դրանում կան հազարաւոր աշ-
խարհաբարեան եւ օտար բառեր, ինչպէս,
օրինակ՝ լրաբեր, լրագիր, խաղարկութիւն,

շոգեկառք, շոգեքարշ, ջերմաչափ, գործա-
դուլ, դաշնամուր, դեղատոմս, հեծանիւ,
հրուշակ եւ այլն: Յովհ. Տէր-Աբրահա-
մեանը շատ գլխաբառեր բացատրում կամ
թարգմանում է միայն մէկ բառով. օրի-
նակ՝ Խառան-չուան-թըթեթա, մինչդեռ
ՆՀԲ-ում աւելի ընդարձակ բացատրու-
թիւններ են տրուած, այսպէս՝ ԽԱՌԱՆ, ի
այց, գ. Նոյն ընդ Կառան. որ եւ Կար. այ-
սինքն Պարան. չուան. տոռն. կապանք
պարանոցի. գուցէ նաեւ Անուր. տ. օր-
ղան, պաղ, քէմէնտ, լալի, հալգա, թաս-
մա, Արկանել խառան ի պարանոց նորա.
եւ ածել ունել զնա առ դուրս սենեկին.
Ագաթ. (յուն. թարգ. քսիլօն. այսինքն
փայտ, որպէս անուր):

Այս բառայոդուածների համեմատու-
թիւնից ակնյայտ է դառնում, որ եթէ
Տէր-Աբրահամեանը շատ բառեր թարգմա-
նում է միայն մէկ համարժէքով, ապա
ՆՀԲ-ն բնութագրում է տուեալ գլխաբա-
ռը, թուարկում դրա հայերէն, թուրքե-
րէն, յունարէն համարժէքները եւ բերում
է բնագրային վկայութիւն, յատկանիշ-
ներ, որոնք է՛լ աւելի են բարձրացնում
բառարանի գիտական արժէքը:

18-րդ դարի կէսերից մեզանում հան-
դէս են գալիս տարբեր տիպի բառարան-
ներ՝ բացատրական, թարգմանական,
մասնագիտական, հանրագիտական եւ
այլն: Դրանցից յիշատակութեան է ար-
ժանի Արսէն Դպիր Կեսարեանի «Գիրք
սահմանաց յոգնադիմի իրողութեանց:
Ըստ կարգի այբուբենից ի մի վայր հա-
ւաքեցեալ» (Կ. Պոլիս, 1749) աշխատան-
քը, որը աստուածաբանական-իմաստասի-
րական հանրագիտարան է: Դրանում
տեղ են գտել թէ՛ հասարակ, թէ՛ յատուկ
անուններ: Օգտուելով Դաւիթ Անյաղթի
աշխատութիւններից՝ Արսէն Դպիրն ամէն
մի առարկայ, երեւոյթ սահմանում է ներ-
գործութեան, ընդհանրութեան, մասնա-

ւորման, առանձին, տարբեր յատկութիւն-
ների եւ պարագաների տեսանկիւններից:

Արսէն Դպիրը կերտել է բազմաթիւ
նոր բառեր ու բառակապակցութիւններ,
ինչպէս, օրինակ՝ ազգատոհմութիւն, բաղ-
ձաքարշութիւն, անվնասակարութիւն, ա-
պառոցել, այլական անուն, այրիական
ողջխոհութիւն²⁸ եւ այլն:

19-րդ դարի երկրորդ կէսին լոյս են
տեսել մասնագիտական եւ հանրագիտա-
կան այլ բառարաններ, որոնցից են Նշան
ձիւանեանի մասնագիտական²⁹, Մ. Քա-
ջունու հանրագիտական³⁰ բառարանները:

Ն. ձիւանեանի բառարանը պարու-
նակում է երկու անկախ աշխատանքներ՝
առհասարակ յատուկ անունների (էջ 1-
165) եւ հայկական յատուկ անունների
(էջ 1-207) բառարանները: Առաջին բա-
ռարանը կազմել է Ֆրանսիացի բառարա-
նագիրներ Բենուոի եւ Լարուսի Առձեռն
բառարանի, երկրորդը Մ. Խորենացու
պատմութեան, Մ. Չամչեանի ժամանա-
կագրութեան, աշխարհաբարեան մասը՝
Ղ. Ալիշանի աշխատութիւնների հետեւո-
ղութեամբ: Ն. ձիւանեանը յաճախ ըն-
դարձակ բացատրութիւն է տալիս եւ հա-
ղորդում պատմական տեղեկութիւններ:
Օրինակ՝

Ակոռի կամ Արկ ուռի. էր աւան յԱւ-
նոյոտն գաւառին ի բարձր կողս Մասեաց
լերին, հռչակաւոր հնութեամբն իւրով,
ուրանոր զառաջինն համարի տնկեալ Նո-
յի զայգի, վասն որոյ եւ կոչեցեալ Արկ
ուռի: Աստ էին երեք հարիւր տունք հա-
յոց եւ հին եկեղեցի եւ գերեզմանատուն
1000 ամեայ, որք հանդերձ հէզ բնակ-
չօքն թաղեցան ընդ մոխրովք լերինն
Մասեաց եւ ընդ տղմաւ հրաբխոյն՝ ի
բորբոքմանէ նորուն եւ յերկաշարժութե-
նէն 1840. այժմ ի ստորոտս լերինն կա-
ռուցեալ է Նորն Ակոռի, ուր են 180
տունք հայոց:

Հր. Աճառեանը իւրաքանչիւր բառարմատ քննում է հինգ բաժնով՝ բառագիտութիւն, ստուգաբանութիւն, ստուգաբանութիւնների պատմութիւն, գաւառական կամ բարբառային ձեւեր եւ հայերէնից փոխառեալ բառեր: Բառայօդուածի առաջին բաժնում գլխաբառը մանրամասնորէն բնութագրուում է բառագիտական, իմաստաբանական, բառակազմական եւ հնչիւնափոխական առումներով: Բառարանի գլխաւոր մասը երկրորդն է՝ ստուգաբանութիւնը, որտեղ տրուում է բառի ծագումը. նախ նշուում է բառի հնդեւրոպական ձեւը՝ =հնդ. նշումով: Բացի դրանից, նա օգտագործել է նաեւ պայմանական այլ նշաններ, այսպէս՝ բնիկ բառեր՝ +, օտար փոխառեալ բառեր՝ *, բնաձայն բառեր՝ 0, հայակերտ բառեր՝ -, սուտ եւ շինծու բառեր՝ []: Բառարանի համար Հր. Աճառեանն օգտագործել է 5-17-րդ դարերի մատենագրական աղբիւրները, տարբեր տիպի բառարաններ, գիտական ուսումնասիրութիւններ եւ մեր 31 բարբառների նիւթը:

Ստուգաբանական բառարանները դասուում են բառագիտական աշխատանքների շարքին: Այդպիսի բառարանները սովորաբար լինում են երկու տեսակ՝ ա) արմատական բառարան, որում տեղ են գտնուում տուեալ լեզուի բոլոր արմատական բառերը՝ անկախ բոլոր արմատները ստուգաբանուած լինելուց, բ) արմատական բառարան, որում տեղ են գտնուում միայն ստուգաբանուած բառերը: Հր. Աճառեանի արմատական բառարանը այդ երկու տիպի բառարանների համադրումն է: Վստահութեամբ կարող ենք ասել, որ բառարանի բառայօդուածի հինգ բաժիններից իւրաքանչիւրը մի իւրայատուկ բառարան է՝ կազմուած իրեն յատուկ սկզբունքներով: Այսպէս՝ առաջին բաժինը կազմուած է բացատրական, երկրորդը՝

համեմատութեան, երրորդը՝ հետազոտութեան տարածամանակեայ, չորրորդը՝ համեմատական բարբառագիտութեան սկզբունքներով: Հինգերորդ բաժնում ցոյց են տրուած հայերէնից այլ լեզուների անցած բառերը, այսինքն՝ վեր է հանուել հայերէնի ազդեցութիւնը օտար լեզուների վրայ:

Ամփոփելով կարող ենք ասել, որ արմատական բառարանում իւրաքանչիւր արմատ ենթարկուել է հնչիւնական, քերականական, իմաստաբանական, բառակազմական, ստուգաբանական, բարբառագիտական, գրչագրական խոր վերլուծութեան ու մշակման: Արմատական բառարանը բարձր է գնահատուել մասնագէտների, մասնաւորապէս Ն. Ակինեանի, Էդ. Աղայեանի, Գ. Զահուկեանի կողմից: «Կասկած չի կարող լինել, գրում է Գ. Զահուկեանը, որ Աճառեանի աշխատութիւնների թագն ու պսակը նրա հոյակապ «Հայերէն արմատական բառարանն» է՝ ամփոփուած եօթ ստուար հատորներում ...: Աճառեանը տալիս է ոչ միայն տասնմէկ հազար արմատների բացատրութիւնը, քերականական ձեւերի հնագոյն վկայութիւնները, ձեռագրական տարբերակները, ածանցեալ ձեւերը եւ ամէնից աւելի հաւանական ստուգաբանութիւնները, ինչպէս ընդունուած է ուրիշ լեզուների ստուգաբանական բառարաններում, այլեւ ստուգաբանութիւնների սպառիչ պատմութիւնը, գլխաբառերի՝ հայերէնի երեսուն բարբառներում ընդունուած ձեւերը եւ այն լեզուների իրողութիւնները, որոնք հայերէնից փոխառութիւններ են կատարել: Այդպիսի ընդարձակ ծրագրով կազմուած ստուգաբանական բառարան ուրիշ լեզուները չունեն»⁴²:

Ամփոփելով գրաբարի բառարանագրութեան անցած ուղին՝ կարելի է յան-

գել հետեւեալ եզրակացութիւններին:

1. Հայ բառարանագրութիւնը սկզբնաւորուում է 5-րդ դարի սկզբից՝ գրերի գիւտից յետոյ, երբ հիմք է դրուում հայ թարգմանական եւ ինքնուրոյն մատենագրութեանը:

2. 17-րդ դարից սկսուում է գրաբարի տպագիր բառարանագրութիւնը, որի հիմքը գրուում է 1698 թ. լոյս տեսած «Բառագիրք հայոց»-ով:

3. Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորանի բացատրական բառարանի հրատարակմամբ (1749-1769 թթ.) գիտական հիմքերի վրայ է դրուում գրաբար բառարանագրութիւնը:

4. Գրաբար բառարանագրութեան ծաղկման շրջանը 19-րդ դարի առաջին կէսն է, երբ լոյս է տեսնում բառարանագրութեան բարձր մակարդակն ապահովող Նոր հայկազեան երկհատորանի բառարանը (1836-37 թթ.), որը բոլոր տեսաւորներից գերազանցում է գրաբարի նախններից Խորե եւ յաջորդ բոլոր բառարաններին: Բացի այդ, հետագայ մեր բոլոր բառարանների համար նմոյշ օրինակ է դասուում Նոր հայկազեանը:

5. Գրաբարի բառարանագրութեան վերելքը շարունակուում է մինչեւ 19-րդ դարի վերջը: Դարի երկրորդ կէսին լոյս են տեսնում ոչ միայն բացատրական կամ թարգմանական, այլ նաեւ մասնագիտական ու հանրագիտական բառարաններ:

6. Համաշխարհային բառարանագրական արժէքների թուին պէտք է դասել Նոր հայկազեան եւ Հր. Աճառեանի «Հայերէն ստուգաբանական բառարանները»:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Եզնկայ կողբացոյ Բագրեանոյայ եպիսկոպոսի «Եղծ աղանդոց», Վեներտիկ, 1826:
2 Մովսիսի Խորենացոյ «Պատմութիւն Հայոց», Տիպիս, 1913:

3 Տե՛ս Յովհաննէս Երզնկացի. Հաւաքումն մեկնութեան քերականի, աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի, Լոս Անճելէս. 1983, էջ 85, 240:
4 Ֆրանչիսկո Ռիվոլա, Բառագիրք հայոց. Միլան, 1621, Փարիզ, 1633. Կղեմէս Գալանոս, Բառագիրք ամենայն իմաստասիրական բանից հայոց եւ լատինացոց, Հոմ, 1645. Յակոբ Վիլոտ, Բառագիրք լատիներէն-հայերէն, Հոմ, 1711:
5 Մխիթար Սեբաստացի, Բառագիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս, Վեներտիկ, 1749, Բ. Ա., էջ 4 Կայսրիկտեա՛ շին հայկազեան բառարան՝ ՀՀԲ:
6 Տե՛ս Ֆ. Ֆելդի, Անդրադարձութիւններ Մխիթարայ Արքայոց Բառարանին շուրջ, «Բազմավեպ», Վեներտիկ - Ս. Ղազար, 1950, էջ 308:
7 Մխիթար Սեբաստացի, Բառագիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս, Բ. Ա., էջ 15:
8 Գ. Աւետիքեան, Խ. Սիրմելեան, Մ. Աւգերեան, Նոր բառագիրք հայկազեան լեզուի, Բ. Ա., Ս-Կ, Վեներտիկ, 1836, Բ. Ա., Հ-Ֆ, 1837 (այսուհետեա՛ Նոր հայկազեան բառարան՝ ՆՀԲ):
9 Հր. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, մաս 2, Երեւան, 1951, էջ 490:
10 Է. Բ. Աղայեան, Հայ լեզուաբանութեան պատմութիւն, Բ. Ա., Երեւան, 1958, էջ 154:
11 Նոր բառագիրք հայկազեան լեզուի, սրբագրուած եւ ճիշտացուած Ն. Բիւզանցոյ ձեռքով. հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Միգասեանը, Ժնն, 1990:
12 Յովհաննիսեան Լ., Նիւթեր պատմական բառարանագրութեան, Երեւան, 2001:
13 Մ. Աւգերեան, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վեներտիկ, 1846:
14 Գրիգոր Փէշտրմալեան, Բառագիրք հայկազեան լեզուի, հատոր առաջին, Ս-Կ, Կոստանդնուպոլիս, 1844, հատոր երկրորդ, Հ-Ֆ, 1846:
15 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Բ. Ա., Ս-Գ, Երեւան, 1971, էջ 6:
16 Մ. Չամչեան, Համաոտ բառարան ի պէտս Անրավարժից ի գրաբարէ յաշխարհաբար, Վեներտիկ, 1859. Էդուարդ Հիրմիզեան (Հիրմիզ): Բառագիրք յաշխարհաբարէ ի գրաբար, Վեներտիկ, 1869:
17 Լ. Խաչատրեան, Գրաբարի բացատրական բառարան (ձեռքագործ տարարժէք բառեր), Երեւան, 2003:
18 Ռ. Ս. Ղազարեան, Գրաբարի բառարան, Բ. Ա., Ս-Կ, Բ. Ա., Հ-Օ, Երեւան, 2000:
19 Մ. Չամչեան, Բառագիրք ի բարբառ հայ եւ ի տալական, Վեներտիկ, 1837:
20 Նոյն տեղում, էջ 7:
21 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան

րան, Բ. Ա. Ս-Ռ, Երևան, 1971, էջ 6:

22 Տե՛ս «Մխիթարեան յոբելեան», Վեճեփիկ, 1901, էջ 14:

23 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Բ. Ա. Երեւան, 1979, էջ Բ:

24 Բիզանդացի Ն. Բառգիրք ի գաղիերէն լեզուէ ի հայերէն, Կոստանդնուպոլիս, 1884:

25 Հանդէս ամսօրեայ, 1921, էջ 87:

26 Յովսէփ Արցախեցի, Համառօտ բառգիրք ի գրաբարէ յաշխարհաբարն ի պէտս համբակցաց, Օուշի, 1830:

27 Յովհաննէս Տէր-Արքաբանեան, Նոր բառգիրք հայերէն գրաբարէ աշխարհաբար լեզուի ոռուսերէն թարգմանութեամբ, Դոնի Ռոստով, 1898:

28 Տե՛ս նաեւ Վ. Համբարձումեան, Գրաբարի գործառնութիւնը որպէս գրական լեզու ժԸ-ժԹ դդ., Երևան, 1990, էջ 166, 171, 185, 188, 194, 201, 202:

29 Նշան Ծիւանեան, Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական եւ դիցաբանական, Կ. Պոլիս, 1879:

30 Մ. Քաջունի, Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, հհ. 1-3, Վեճեփիկ, 1891-1893:

31 Նոյն տեղում, Բ. 1, էջ Բ:

32 Նոյն տեղում, էջ Գ:

33 Յարութիւն Աւգերեան, Բացատրութիւն չափոց եւ կշռոց, նախնեաց առաջնորդութեամբ

Եպիփանու, Խորենացոյ եւ Օիրակացոյ, Վեճեփիկ, 1821:

34 Մ. Ռեստեմ, Բժշկականութիւն կամ բժշկական բառարան, Վեճեփիկ, 1822, 1832:

35 Բառարան Սուրբ Գրոց հանդերձ պատկերօք, աշխարհացոց եւ տախտակօք, Կոստանդնուպոլիս, 1879, 1881, Երևան, 1992:

36 Կազմողի անունը յայտնի չէ. բառարանագէտ Գ. Գասպարեանը այն վերագրում է Նիկողայոս Աւգերեանին (տե՛ս Գ. Կ. Գասպարեան, Հայ բառարանագրութեան պատմութիւն, Երևան, 1968, էջ 272):

37 Մ. Օրմանեան, Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 1957, Երևան, 1992:

38 Պոլ դը Լագարդ, Armenische Studien («Հայկազեան ուսումնասիրութիւններ»), Գետթինգեն, 1847:

39 Յովհ. Հիւնքեարպէյնեանեան, Ստուգաբանական բառարան հայ լեզուի, Կոստանդնուպոլիս, 1894:

40 Էդ. Բ. Աղայեան, Հայ լեզուաբանութեան պատմութիւն, Բ. 1, Երևան, 1958, էջ 386-387:

41 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հհ. Ս-Ռ, Երևան, 1971-79:

42 «Լեզուի եւ ոճի հարցեր» (ժողովածու), 1978, պրակ 5, էջ 7-8:

ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆԻ ՁԵԽԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Անդրանիկ Կարապետեան

Ձեւաբանական մակարդակը, որ յաջորդում է բառային մակարդակին եւ ընդգրկում լեզուի ձեւաբանական համակարգը, տուեալ լեզուում իրացուող քերականական իմաստների ու սրանցով պայմանաւորուած քերականական կարգերի դրսեւորման հիմնական դաշտն է: Այս մակարդակի գլխաւոր միաւորը խօսքի մասերն են՝ իրենց բնորոշ քերականական կարգերով ու յատկանիշերով, տարբերոյթ առանձնայատկութիւններով: Կրկնութիւնը ձեւաբանական մակարդակում եւս ունի իր դրսեւորումները, թէպէտ ոչ այն իրացումների չափ, որ նա ունի Հնչոյթային, բառային եւ մանաւանդ շարահիւսական մակարդակներում: Ձեւաբանական մակարդակում կարեւորում են կրկնութեան յատկապէս այն իրացումները, որոնք ունեն ձեւաբանական արժէք ու նշանակութիւն: Եւ քանի որ այս մակարդակում բառը դիտարկւում է որպէս ձեւաբանական խմբի՝ խօսքի մասի ներկայացուցիչ, ուստի այստեղ կրկնութեան քննութիւնը կրկնաւոր բարդութիւնների ձեւաբանական արժէքի լուսաբանումն է, բացայայտումը ձեւաբանական այն իւրայատկութիւնների, որոնք պայմանաւորուած են բառոյթի կազմակերպում արմատի կամ բառի կրկնութեամբ: Հետեւաբար եթէ բառային մակարդակում կրկնութեան քննութեան նպատակը կրկնաւոր բարդութիւնների կառուցուածքաիմաստային իւրայատկութիւնների բացայայտումն է, ապա ձեւաբանական մակարդակում նոյն կրկնաւոր բարդութիւնները դիտարկւում են որպէս ձեւաբանական որոշակի խմբերի ներկայացուցիչներ, վեր են հանւում

դրանց խօսքիմասային առանձնայատկութիւնները: Ձեւաբանական մակարդակում կրկնութեան հարցի քննութեան նպատակն է՝

ա) որոշել կրկնաւոր բարդութիւնների խօսքիմասային պատկանելութիւնն ու միւս ձեւաբանական առանձնայատկութիւնները:

բ) պարզել բառական կազմակերպում արմատի կամ բառի կրկնութիւնն ազդում է նրա ձեւաբանական արժէքի վրայ, եւ եթէ ազդում է, ապա ինչպիսի՞ն է կրկնաւոր բարդութեան խօսքիմասային տարարժէքութիւնը,

գ) բացայայտել պարզ բառոյթի ձեւաբանական իմաստի մէջ կատարուած տեղաշարժերը՝ պայմանաւորուած նախադասութեան մէջ նրա շարահիւսական կրկնութեամբ:

Նախ՝ կրկնաւոր բարդութիւնների ձեւաբանական իմաստի տեղաշարժերի մասին: Այս կապակցութեամբ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել ակադ. Գ. Զահուկեանի հետեւեալ դիտարկումը. «Կրկնութիւնը, ըստ իր բաղադրիչների հետ ունեցած գործառական փոխյարաբերութեան (խօսքիմասային գործառութեան), կարող է լինել համագործառական եւ փոխգործառական (համակազմակերպային եւ փոխկազմակերպային): Առաջին դէպքում կրկնաւոր բարդութիւնն ունի խօսքիմասային այն արժէքը, ինչ նրա բաղադրիչները, յատկապէս՝ հիմնական բաղադրիչը՝ կրկնեալը, առանձին վերցրած: Երկրորդ դէպքում առկայ է խօսքիմասային փոխանցում՝ տեղաշարժ մի